ԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մեծ է ավանդույթների պրոբլեմի հետազոտման նշանակությունը գրականագիտական խնդիրների լուծման գործում։ Ոչ այլ կերպ, քան գրական զարգացման միտումների իմացությամբ ու այդ միտումների շարունակ թարմացման չափանիշներով միայն կարելի է ճիշտ գնահատել գրողի ստեղծագործության գեղարվեստական արժեքը, ինչպես նաև ճշտորեն որոշել նրա դերը գրական զարգացման ընդհանուր շղթայում։ Չնայած դրան՝ ավանդույթների պրոբլեմը գրականագիտության ամենից ավելի քիչ ուսումնասիրված և տակավին չլուծված խնդիրներից է։ Այդ խնդրի լուսաբանման անբավարար վիճակի համընդհանուր արտահայտություններից մեկը ավանդույթների ու ազդեցությունների նույնացման միտումն է։ Քիչ է հոգ տարվել նաև «ավանդույթ» հասկացության գիտական բնութագրման ուղղությամբ։ Այս բացը գրականագիտության մեջ առկա է ոչ միայն ավանդույթների, այլև գեղագիտական մյուս հասկացությունների, օրենքների ու օրինաչափությունների առնչությամբ։ «Դժբախտաբար, մեր գրականագիտության ու քննադատության բնագավառում այս ուղղությամբ քիչ մտահոգություն է ցուցաբերվում»[1],— նկատում է հետազոտողը։

Ծանոթանանք գրականագիտության մեջ հազվադեպ պատահող ավանդույթների սահմանումներից մի քանիսին։

«Ավանդույթն այնպիսի գաղափարական խտացում է,— գրել է Կ. Շ. Նուրլանովան,— որը հասարակական գործունեության ընթացքում շարունակ հարստանում է նոր կողմերով»[2]։ Եթե միանգամայն ընդունելի է ավանդույթների անընդհատ կերպափոխման վերաբերյալ հեղինակի ըմբռնումը, ապա երևույթի ամբողջական ընդգրկման առումով սահմանումը մերժելի է ընդհանրապես, որովհետև այն չի բացահայտում ավանդույթներին ներհատուկ կարևոր հատկանիշները։ Ավանդույթները «գաղափարական խտացումներ» համարելով՝ երևույթի դրսևորման ոլորտն արհեստականորեն հանգեցվում է միայն գրական ստեղծագործության բովանդակային կողմին՝ անտեսելով գեղարվեստական ձևի բնագավառը։ Այս իմաստով իրավացի է Լ. Ի. Տիմոֆեևը, որը ավանդույթների հարցը քննում է ձևի ու բովանդակության զարգացման միասնականության մեջ[3]։

Սահմանման այլ տարբերակ է առաջարկում Ն. Պոպովիչը։ Նա գրական ավանդույթ է համարում «դարերի ընթացքում մշակված որոշակի սյուժեների, թեմաների, գաղափարների, ձևերի, արտահայտչական միջոցների պահպանումը»[4]։ Այս սահմանումը, որն ունի նախորդի բոլոր պակասությունները, միաժամանակ չունի նաև այն միակ առավելությունը, որ հատուկ է Նուրլանովայի սահմանմանը։ Այսպես՝ չնայած Պոպովիչի մոտեցմամբ հաղթահարված է ավանդույթները միայն արվեստի բովանդակության վրա տարածելու սահմանափակությունը, այդուհանդերձ բացակայում է ավանդույթներն անընդհատ շարժման ու փոփոխման մեջ դիտելու Նուրլանովայի ձևակերպման մասնավոր արժանիքը։

---

[1] Ս. Ն. Սարինյան, Սերունդներ և ավանդներ, Երևան, 1984, էջ 254։

[2] К. Ш. Нурланова, Традиции устной литературы в современной казахской прозе (Традиции и новаторство в художественном освоении действительности, Алма-Ата, 1981, с. 53).

[3] Л. И. Тимофеев, Вопросы марксистско-ленинской эстетики, М., 1956, с. 261.

[4] Н. Попович, О некоторых фольклорных традициях и их творческом использовании писателями XIX века (Традиции и новаторство, Кишинев, 1973, с. 4).

Ավանդույթների բացատրության մեկ այլ տարբերակ է առաջադրում նշանավոր գրականագետ Ա. Բուշմինը. «Գեղարվեստական ավանդույթը նախորդ սերունդների փորձով ձեռք բերված արժեք է, որը գրողը կոչված է պահպանելու՝ հարստացնելով այն իր ստեղծագործությամբ»[5]։ Այս սահմանման համար հատկանշականն այն է, որ դրանում հաղթահարված են նախորդ բնութագրումների երկու վրիպումներն էլ։ Չնայած դրան, դժվար է համաձայնել Բուշմինի որոշ բնութագրերին։ Մասնավորապես, կարծում ենք, վիճելի է «արժեք» բնորոշումը, որը իսկությամբ չի վերարտադրում ավանդույթների հիմնական էությունը։ Եվ հետո՝ նպատակահարմար չէ ավանդույթները դիտել միարժեք, որը «գրողը կոչված է պահպանելու»։ Նման ձևակերպումը ենթադրում է գրողի՝ ավանդույթների պարտադիր գիտակցման փաստը, մի բան, որը լիովին չի համապատասխանում իրականությանը։ Ավանդույթները միշտ չէ, որ գիտակցվում են արվեստագետի կողմից։

Այս վերջին երկու ձևակերպումները շարունակվում ու խորացվում են մեկ այլ սահմանման մեջ. «Ավանդույթը (լատ. traditio—փոխանցում, փոխանցելի) անցյալ դարաշրջանների մշակութային-գեղարվեստական փորձն է, որն ընկալվում ու յուրացվում է գրողների կողմից իբրև ստեղծագործական կողմնորոշմանը ծառայող այժմեական ու մնայուն արժեքներ»[6]։ Այստեղ «արժեքի» հետ կողք-կողքի կիրարկվում է նաև «փորձ» բնորոշումը, որն ամենից ավելի տարածվածն է գրականագիտության մեջ և որը, ըստ իս, դարձյալ ճշգրտորեն չի արտացոլում «ավանդույթ» հասկացության հիմնական բովանդակությունը։ Ինչ վերաբերում է գրողի կողմից ավանդույթների պարտադիր գիտակցմանը, ապա դրանց «ընկալման ու յուրացման», ինչպես նաև «ստեղծագործական կողմնորոշման» գործոններ համարվելու հանգամանքները այդ միտքն ավելի են ընդգծում։

Ավանդույթների պարտադիր գիտակցման նույն ընկալումն է առկա նաև Գ. Ֆրիդլենդերի բնորոշման մեջ. «Ավանդույթներն ամեն մի նոր սերնդի համար ծառայում են իբրև «ելման կետեր» գրականության և հոգևոր մշակույթի մյուս ոլորտների հետագա զարգացման համար»[7]։ «Ելման կետը» «ստեղծագործական կողմնորոշման» մեկ այլ տարբերակն է, ավանդույթների պարտադիր գիտակցվածության նույն հավաստումը։ Գրողի ստեղծագործություններում միշտ էլ պարտադիր դրսևորվում են անցյալի գրական ավանդույթներն իրենց որակական ու քանակական փոխակերպումներով։ Սակայն միշտ չէ, որ ավանդույթների ժառանգորդությունը գրողը իրագործում է գիտակցաբար, կանխամտածված։ Եվ միշտ չէ, որ ավանդույթները կարելի է համարել իբրև ստեղծագործական կողմնորոշման պարտադիր պայմաններ։ Ա. Սեգովը, օրինակ, տարբերակում է գրական ավանդույթների երկու տեսակ՝ գիտակցված և չգիտակցված[8] և նա, կարծում ենք, միանգամայն իրավացի է։ Երբեք էլ մտքի անհետևողականության ու հակասականության հետևանք չէ այն պնդումը, թե գրողը ավանդույթների պարտադիր հետևորդ է, այն դեպքում, երբ նա բոլորովին էլ չի գիտակցում ավանդույթները։ Բանն այն է, որ գրողի համար ստեղծագործական պարտադիր, գիտակցված ու ակտիվ կողմնորոշիչներ են ծառայում ոչ թե ավանդույթները, այլ այն գործոնները, որոնք ծնունդ են տալիս և իրենց՝ ավանդույթներին։ Դրանք ժամանակի այրող, հրատապ խնդիրների մարմնավորումն են, այն համընդհանուր մղիչ ուժը, որը կարգավորում է գրողի մշտական կապը նախորդ և գալիք ավանդույթների հետ և որը միավորում է բոլոր ժամանակների ստեղծագոր-

---

5 А. С. Бушмин, Преемственность в развитии литературы, Л., 1978, с. 166.

6 Литературный энциклопедический словарь, М., 1987, с 443.

7 Г. М. Фридлендер, Методологические проблемы литературоведения, Л., 1984, с. 55.

8 А. Ф. Седов, Травести некоторых мотивов русской классической литературы в романах И. Ильфа и Е. Петрова (Традиции и новаторство в художественной литературе, Горький, 1983, с. 106).

ծողներին ավանդույթների շարժման միասնական հունի մեջ նույնիսկ այն դեպքերում, երբ այդ հունը նրանցից շատերը ամենևին էլ չեն գիտակցում։

Հիմնավորվածության իմաստով միանշանակ չէ մեկ այլ հետազոտողի՝ Վ. Շչերբինայի սահմանումը. «Գրականության մեջ ավանդույթները անցյալի գեղարվեստական ստեղծագործության օբյեկտիվորեն ամրապնդված արժեքավոր նվաճումներն են, որոնց հետագա հարստացումն օգտագործվում է հասունացած կենսական պահանջմունքներով ու խնդիրներով պայմանավորված արվեստի զարգացման համար»[9]։ Մեր կարծիքով Շչերբինայի դատողության գլխավոր առավելությունը, որը բացակայում է մյուս բոլոր սահմանումներում, ավանդույթների օբյեկտիվ, ստեղծագործողի կամքից անկախ գոյություն ունեցող փաստի ընդունումն է։ Իսկ նախորդներից դարձյալ տարբերվող թերությունն այն է, որ ավանդույթները դիտվում են իբրև գրական ընթացքի «արժեքավոր նվաճումներ»։ Ըստ որում՝ հիմնավոր չեն թվում թե՛ «նվաճումներ» և թե՛ «արժեքավոր նվաճումներ» բնորոշումները՝ հավասարապես։ «Նվաճումները» նախորդ բացատրություններում հանդիպող «արժեք» և «փորձ» բնութագրումների անընդունելի տարատեսակություններից են։ Իսկ ինչ վերաբերում է «արժեքավոր նվաճումներին», ապա վերջինս միակողմանիորեն է ներկայացնում ավանդույթների բնույթը, որի վերաբերյալ մարքս-լենինյան ըմբռնումը հանգում է երկու կարգի՝ առաջավոր և ռեակցիոն ավանդույթների տարբերակմանը։ Հետադիմական ավանդույթների մասին Մարքսն ու Էնգելսը մասնավորապես գրել են, որ «մեռնող սեբընդի» շատ ավանդույթներ «մղձավանջի պես» ճնշում են ապրողների ուղեղները[10]։ Նման պահպանողական ավանդույթները, նշել են մարքսիզմի դասականները, անցյալում խաղացել են և շարունակում են խաղալ հետադիմական բացասական դեր՝ հանդես գալով իբրև պատմական առաջընթացն արգելակող խոչընդոտներ։ Ինչպես պատմական, այնպես էլ մշակութային զարգացման մեջ լինում են ոչ միայն օբյեկտիվորեն գոյություն ունեցող «արժեքավոր», առաջադիմական, այլև «անարժեք», պահպանողական միտումներ, որոնք կասեցնում ու դժվարացնում են գրական առաջընթացը։ Այնպես որ, ճիշտ չէ ավանդույթների բնույթը սոսկ արժեքավորությանը հանգեցնելու ձգտումը, քանի որ գրական ընթացքն այլ բան չէ, քան հին ու նոր և այս իմաստով ներհակ ավանդույթների մշտական բախման ասպարեզ, և գեղարվեստական զարգացումն էլ այլ բան չէ, քան առաջավոր և պահպանողական ավանդույթների միջև մղվող հարատև պայքարում առաջավոր ավանդույթների տարած դժվարին ու աստիճանական հաղթանակը։

Գրական ավանդույթների հիմնական հատկանիշների բացահայտման գործում նոր ու էական որակ է բերում գրականագետ Դ. Լիխաչովը. «Գրական ստեղծագործությունն իրականում զուգակցում է իր մեջ անհրաժեշտությունն ու ազատությունը։ Անհրաժեշտությունը պատմագրական զարգացման օրինաչափություններն են, այն ավանդութային ձևերը, որոնցով իրագործվում է զարգացումը»[11]։ Ավանդույթները պատմագրական զարգացման օրինաչափություններն են. ահա այն անվերապահ արժեքավորը, որին մենք չենք հանդիպում բոլոր նախորդ սահմանումներում։

Այսպիսով, ավանդույթների տեսությունը պարունակում է բազմաթիվ արժեքավոր ընդհանրացումներ, որոնք, սակայն, չեն սպառում ավանդույթների հարուստ ու ընդգրկուն բովանդակությունը։ Հեռու լինելով ավանդույթների վերաբերյալ սպառիչ ու վերջնական սահմանում առաջադրելու հավակնությունից, ներկայացնում ենք նույն երևույթի բացատրության մեր տարբերակը, որը կարծում ենք, արտացոլում է այդ հասկացության տարողունակ բովանդակության էական կողմերը։

---

9 В. Р. Щербина, Ленин и вопросы литературы, М., 1985, с. 485.

10 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, 2-ое изд., т. 8, М., 1957, с. 119.

11 Д. С. Лихачев, Литература—реальность—литература, Л., 1984, с. 200.

Գրական ավանդույթները ազգային գրականության զարգացման՝ կենսական շարժառիթներով պայմանավորված օբյեկտիվ օրինաչափություններ են, որոնք գրական տարբեր պատմաշրջաններում ունեն ընդհանուր, պարտադիր, կրկնելի դրսևորումներ և որոնք յուրաքանչյուր գրողի ստեղծագործության մեջ հանդես են գալիս մշտական ու կանոնավոր փոխակերպումների հերթական նոր տեսքով՝ միաժամանակ կոռնելի դարձնելով այդ փոխակերպումների հեռանկարները:

Որո՞նք են այս սահմանումից բխող այն բնորոշումները, որոնք, բնութագրելով գրական ավանդույթները՝ միաժամանակ մատնանշում են գրական ավանդույթների ու ազդեցությունների միջև եղած տարբերությունը:

1. Լինելով ազգային գրականության զարգացման օրինաչափություններ՝ ավանդույթները նույնքան ազգային երևույթներ են, որքան գրականությունն ինքը: Ազգային էությունը ավանդույթների հիմնական հատկանիշներից է, որի հիշատակմանը, սակայն, մենք չենք հանդիպում ավանդույթների տեսության մեջ: Ընդհակառակը, նույն տեսությանը բնորոշ են ավանդույթների ազգային էությանը հակասող բյուրավոր փաստեր: Գրականագիտության մեջ հաճախ ենք հանդիպում դեպքերի, երբ ավանդույթների պրոբլեմը քննարկելիս իբրև համեմատության եզրեր են ընտրում տարբեր ազգային հեղինակների՝ տարվելով նրանց միջև ստեղծագործական ինչ-ինչ ընդհանրությունների բացահայտման խնդրով: Նման մոտեցումը բխում է ավանդույթների էության անճիշտ պատկերացումներից, դրանց ազգային նկարագրի անտեսումից: Այդ նկարագիրը, բացառելով արտաքին գրական առնչությունների դիտարկումները, պարտադրում է ավանդութային դրսևորումները որոնել միայն հայրենական մշակույթի շրջանակներում, ազգային գրականության զարգացման առանձնահատկությունների մեջ:

Հայ նոր բանաստեղծության զարգացմանը, օրինակ, բնորոշ է հեղինակային անհատականության դրսևորման շարունակական աճի ձգտումը, որն արտահայտվել է որոշակի օրինաչափությամբ՝ օբյեկտիվ լիրիկայի աստիճանական նվազման և անհատական լիրիկայի անընդհատ ընդլայնման ճանապարհով: Սուբյեկտիվ լիրիկայի աստիճանական աճն ու անհատի ներաշխարհի բացահայտման հետզհետե ուժգնացող ձգտումն է նկատի ունեցել ակադ. Էդ. Ջրբաշյանը, գրելով. «80—90-ական թթ. հրապարակ իջած բանաստեղծների նկարագիրը հիմնականում քնարական էր: Դա անպայմանկապված էր պոեզիայի առջև դրված էական խնդիրներից մեկի՝ անհատի ներաշխարհը բազմակողմանիորեն բացահայտելու խնդրի հետ: Վերջինս շատ թույլ էր իրագործվել արևելահայ պոեզիայի նախորդ շրջանում՝ Պատկանյանի և Շահազիզի ժամանակ, երբ բանաստեղծները զբաղված էին գերազանցապես ազգային-քաղաքական և երգիծական թեմաներով: Դրանց կողքին նաև անհատական քնարերգության բուռն զարգացումը, որ նկատվում է դարավերջի բանաստեղծների մոտ, հարստացնում էր մեր պոեզիայի բովանդակությունը»[12]:

Եթե ավանդույթներն ունեն ազգային պարտադիր բնութագիր, ապա գրական ազդեցությունների համար ազգային նկարագիրն ամենևին էլ պարտադիր հատկանիշ չէ: Ամեն մի ստեղծագործող կարող է ազատորեն օգտվել ինչպես հայրենական, այնպես էլ այլ գրականությունների նվաճումներից: Ավելին՝ գրական ստեղծագործությունն ավելի բարձրարժեք է այն դեպքում, երբ հաշվի է առնվում համաշխարհային գրականության փորձը, օգտվում դրա նորագույն ձեռքբերումներից: Մինչդեռ այլ գրականությունների զարգացման օրինաչափությունները կամ ավանդույթները չեն կարող ներմուծվել հայրենական մշակույթ և վերաձևվել դրա ընթացքի վրա: Այս իմաստով՝ գրական ավանդույթներն ավելի անխառն ու «զտարյուն» ազգային նկարագիր

---

12 Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 13:

ունեն, քան ազգային գրականությունն ինքը, քանի որ վերջինս ներառում է իր մեջ նաև օտար ազդեցությունների տարրեր։

2. Այնուհետև պետք է ընդգծել ավանդույթների՝ գրականության զարգացման օրինաչափություններ և մշտական ու կանոնավոր փոխակերպումներ լինելու հանգամանքը, քանի որ հենց այդ սահմանող հասկացություններն են հավակնում բացահայտել երևույթի կարևորագույն հատկություններից երկուսը։ Մտածողության բոլոր ձևերը, որոնք մարքս-լենինյան ըմբռնմամբ՝ օբյեկտիվ ռեալության սուբյեկտիվ պատճենումներն են, պետք է ճշմարտացիորեն արտացոլեն օբյեկտիվ ռեալության էական կողմերը և, առաջին հերթին՝ այդ ռեալության մշտապես փոփոխելի, հարաշարժ հատկությունը։ Իրերի դիալեկտիկային պետք է հետևի ճանաչողության դիալեկտիկան։ Ահա թե ինչու ավանդույթների վերաբերյալ դատողություններում կարևոր է ավանդույթների փոփոխելիության, դրանց մշտական դինամիկայի ընդգծումը։ Սակայն ավանդույթների մշտական փոփոխման ընդունումն ինքնին դեռևս բավարար չէ դրանց զարգացման բնույթը բացատրելու համար։ Ավանդույթների զարգացումը գեղարվեստական ձևի ու բովանդակության ոլորտում կատարվող պատահական ու անկանոն տեղաշարժերի մեխանիկական գումար չէ, այլ այդ ոլորտի շարժման կանոնավոր ընթացք և փոխակերպումների իմաստավորված ուղղվածություն, նույն ոլորտի ինչ-ինչ կողմերի աստիճանական ամրակայման կամ նվազման համակարգված ու հետևողական պրոցես, որը ոչ այլ ինչ է, քան կենսական երևույթների օրինաչափ ու կանոնավոր զարգացման գեղարվեստական արտացոլումների արտահայտություն։ Այդ իսկ պատճառով ավանդույթը սահմանող դատողության մեջ կարևոր է ոչ միայն ավանդույթների փոփոխման, այլև դրանց կանոնավոր փոխակերպումների և զարգացման համակարգի բերված օրինաչափ բնույթի ընդգծումը։

3. Որպես ազգային գրականության զարգացման՝ կենսական շարժառիթներով պայմանավորված օբյեկտիվ օրինաչափություններ՝ գրական ավանդույթները ստեղծագործողի կամքից ու գիտակցությունից դուրս գործող օբյեկտիվ իրողություններ են, որոնք բխում են ազգային կյանքի հասարակական-տնտեսական և քաղաքական կառուցվածքի փոփոխություններից։ Այնպես որ գրողը ոչ թե ինքն է ստեղծում գրական ընթացքի ինչ-ինչ միտումներ, այլ ինքն է ենթակա նույն միտումների կամքին։

Ի տարբերություն ավանդույթների, գրական ազդեցությունները ոչ թե ուղղակիորեն բխում են հասարակական-նյութական հարաբերություններից, այլ այդ հարաբերությունների հասունությամբ առաջադրվող կենսական պրոբլեմների արտացոլման կամ ավանդույթների մարմնավորման անհրաժեշտությունից։ Եվ քանի որ գրական ազդեցությունները կարգավորվում են ավանդույթներին ծառայելու գործնական պահանջով, իսկ վերջիններս էլ կյանքի են կոչվում կենսական հանգամանքների ընդերքից, ուրեմն գրական ազդեցությունները, վերջին հաշվով, կողմնորոշվում են նույն կենսական հանգամանքների հիմքից, միայն թե՝ միջնորդավորված տեսքով, բեկվելով ավանդույթները մարմնավորող արվեստագետի տաղանդի ու անհատականության առանձնահատկությունների, նրա ստեղծագործական խառնվածքի ու նախասիրությունների բնույթի, նրա անձնական ճակատագրի, գրական շփումների և այլ սուբյեկտիվ գործոնների միջով։ Գրական ազդեցությունները գրական ավանդույթներին ոչ թե հակասող, այլ այդ ավանդույթների բարձրարվեստ մարմնավորմանը նպաստող գործոններ են։ Դա է գրական ավանդույթների ու ազդեցությունների կապի բովանդակությունը։

4. Ավանդույթների բնութագրման համար կարևոր է նաև դրանց՝ գրական տարբեր պատմաշրջանների համար ընդհանուր, պարտադիր և կրկնելի դրսևորումների ընդգծումը։ Պատմական ամեն մի ժամանակաշրջան գրական ընթացքին հաղորդում է իրեն հատուկ գծեր ու առանձնահատկություններ, որոշում դրա զարգացման ներքին տրամաբանությունն ու ընդհանուր ուղղ-

վածությունը, առաջադրում դրան դեղագիտական իր ուրույն խնդիրն ու պրոբլեմները, այլ կերպ՝ պայմանավորում է տվյալ պատմաշրջանի գրական ավանդույթների ամբողջությունը, որը ընդհանուր, պարտադիր ու կրկնելի է գրական շղթայի բոլոր օղակների համար։ Չկան և չեն կարող լինել գրական պատմաշրջանի ընդհանուր օրինաչափություններից դուրս ստեղծագործող հեղինակներ։ Նրանք բոլորն էլ, կամա թե ակամա, գիտակցորեն թե չգիտակցված իրենց գործունեությունը ծավալում են գրական նույն ընդհանուր, պարտադիր ու կրկնելի օրինաչափությունների շրջանակներում՝ առանց բացառության ու «արտոնությունների»։ Գրական ավանդույթների ընդհանրությունն ու կրկնելիությունը գրականագիտության մեջ նկատվել է գրեթե բոլորի կողմից։ Սակայն գրական պրակտիկայում հանդիպող ընդհանուր, կրկնվող երևույթները ոչ քիչ դեպքերում ընկալվել են իբրև միմյանց վրա ներգործելու, միմյանցից ազդվելու և միմյանց ընդօրինակելու փաստեր։ Կարծում ենք, արվեստում կրկնելիության երևույթի առավել ճիշտ բացատրությունը տվել է Ա. Բուշմինը. «Ինչ խոսք,— գրում է նա,— իսկական արվեստի ստեղծագործությունը միշտ էլ ինքնուրույն ու անկրկնելի է իր ամբողջականության մեջ։ Սակայն յուրաքանչյուր անկրկնելի ամբողջականության մեջ կան ընդհանուր (կրկնվող) տարրեր, գծեր, կողմեր։ Ինչո՞վ է պայմանավորված այդ կրկնելիությունը։ Առաջին հերթին՝ արվեստի ստեղծագործության մեջ արտացոլվող իրականության ընդհանուր (նման, կրկնվող) երևույթներով»։ «Գրական ձևերի, կերպարների, իրավիճակների կրկնելիությունը,— շարունակում է նա,— հետևանք է ոչ միայն գրական ազդեցությունների, այլև, որ ավելի հաճախ է պատահում՝ պատկերվող կենսական երևույթների կրկնելիության»[13]։

Ինչպե՞ս հասկանալ կենսական երևույթների կրկնելիությամբ կարգավորվող գրական ավանդույթների կրկնելիության երևույթը։ Գրականության կողմից արտացոլվող կենսական իրողությունները (հասարակական բարքերն ու ըմբռնումները, մարդկային հոգեբանությունն ու նրանց փոխհարաբերությունների բազմապիսի ձևերը) չեն ծնվում ու չեն անհետանում միանգամից։ Դրանք, ինչպես արդեն ասվել է, անցնում են զարգացման երկարատև, կանոնավոր ու աստիճանական ճանապարհ։ Պատճառն այն է, որ դրանք ծնող նյութական հարաբերություններին նույնպես բնորոշ է ձևավորման երկարատև, կանոնավոր ու աստիճանական ընթացքը։ Կենսական երևույթների աստիճանական ու կանոնավոր փոխակերպումների բնույթն էլ հենց ընկած է գրական ավանդույթների կրկնելիության հիմքում։ Շնորհիվ այդ բնույթի՝ գրական ուղընթացում առաջանում են գեղարվեստական ձևի ու բովանդակության ինչ-ինչ կողմերի (թեմաների, գաղափարական տլորտի, կերպարների, կյանքի արտացոլման առանձնահատկությունների, լեզվական իրողությունների և այլն) աստիճանական ամրակայման կամ թուլացման միտումներ, որոնք փոխակերպումների ամեն մի նոր աստիճանում մշտապես կրկնվում են՝ հետզհետե ընդգծման կամ նվազման հակումներով։ Գրական ավանդույթների կրկնելիությունը, հետևաբար, ոչ թե գեղարվեստական երևույթների սոսկական, այլ դրանց մշտական փոխակերպումների, որոշ երևույթների աճի ու մյուսների թեղատվության միտումների կրկնելիություն են։

Հայ նոր գրական պատմաշրջանում հասարակական-տնտեսական, իսկ ավելի ստույգ՝ կապիտալիստական հարաբերությունների աստիճանական ձևավորման ու հետագա զարգացման հիմքի վրա գոյանում են կենսական երևույթների (բարքերի ու սովորույթների, հասարակական շերտավորումների ու բախումների, մարդկային փոխհարաբերությունների ու բարոյական չափանիշների) աստիճանական փոխակերպումներ, որոնք առաջ են բերում գեղարվեստական համակարգի օրինաչափ փոխակերպումների բազմապիսի

---

13 А. С. Бушмин, նշվ. աշխ., էջ 42։

դրսևորումներ։ Դրանցից մեկն էլ սոցիալական խնդիրների արծարծման շարունակ աճի ձգտումն է։ Գրական զարգացման ամեն մի նոր աստիճանում, սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի սրմանը զուգընթաց՝ այդ ձգտումը դրսևորվում է էլ ավելի ընդգծված ձևով։ Ըստ որում, ընդգծվածությունն արտահայտվում է ինչպես սոցիալական նոր երևույթների արտացոլմամբ, այնպես էլ նախկին երևույթների առավել համակողմանի բացահայտմամբ, դրանց գաղափարական առավել խոր արժեքավորումներով։ Այնպես որ ավանդույթների կրկնելիությունը տվյալ դեպքում ոչ թե նախկինում արտացոլված սոցիալական երևույթների նույնական վերապատճենումներն են, այլ այդ երևույթների մշտական աճի կրկնելիության գեղարվեստական մարմնավորումը։

Ավանդույթների կրկնելիությունն առկա է ոչ միայն տվյալ ազգային գրականության զարգացման մեջ, այլև տարբեր ազգային գրականությունների միջև։ Հայ նոր գրականության մեջ հիշատակված սոցիալական թեմայի և առհասարակ թեմատիկ զարգացման օրինաչափություններին կարելի է հանդիպել նաև ռուս գրականության մեջ։ Ռուսական «արվեստում,— գրել է Դ. Ս. Լիխաչովը,— քայլ առ քայլ անհետանում են «արգելված» թեմաները. թեմաներ, որոնք չէին հանդուրժվում գրական էտիկետի կողմից։ Գրական թեմաների քանակն աստիճանաբար ընդարձակվում է և միահյուսվում իրականությանը։ Թեմատիկ քանակն արվեստում, սկզբնապես շատ սահմանափակ ձգտում է հավասարվել կենսական կողմերի ու երևույթների քանակին»[14]։

Տարբեր ազգային գրականությունների միջև եղած ավանդույթների կրկնելիությունը դարձյալ բացատրվում է տարբեր երկրների տնտեսական-նյութական և հասարակական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների կրկնելիությամբ։ «Հասարակական-նյութական հարաբերությունների վերլուծությունը,— գրել է Լենինը,— միանգամից հնարավորություն տվեց նշմարելու կրկնելիությունն ու կանոնավորությունը և ընդհանրացնելու տարբեր երկրների կարգերը հասարակական ֆորմացիա մի ընդհանուր հասկացության մեջ»[15]։ Տարբեր երկրներում նյութական-հասարակական հարաբերությունների զարգացման, միանման հասարակարգերի գոյացման, սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի սրման օրինաչափությունների կրկնելիությունն այն հիմքն է, որի վրա բարձրանում է տարբեր ազգային արվեստների գեղարվեստական ավանդույթների կրկնելիությունը։

Իրենց կրկնելի, ընդհանուր ու պարտադիր հատկանիշներով ևս գրական ավանդույթները տարբերվում են գրական ազդեցություններից։ Միևնույն բնույթի ազդեցությունները երբեք էլ գրական շղթայի բոլոր օղակների համար պարտադիր, ընդհանուր և կրկնելի երևույթներ չեն։ Իբրև մասնավոր իրողություններ՝ դրանք որոշ հեղինակների ստեղծագործությունների մեջ կարող են դրսևորվել, իսկ մյուսների երկերում՝ ոչ։ Բաղաձայնությունների փորձին, օրինակ, կարող են դիմել որոշ հեղինակներ միայն, բայց նույն փորձը մյուսների կողմից կարող է և չօգտագործվել ընդհանրապես։ Բաղաձայնությունները, ինչպես և գեղարվեստական մյուս բոլոր արտահայտչամիջոցները, գրական ընթացքի խիստ մասնավոր ու պատահական ուղեկիցներն են, որոնց կիրառումը չի կարող վերածվել ավանդույթի՝ գրական ուղու անհրաժեշտ, օրինաչափ, կենսականորեն պայմանավորված, օբյեկտիվորեն պարտադիր ու մշտապես կրկնելի պայմանի։ Նույնքան մասնավոր ու պատահական երևույթ է նաև պատկերավորման միջոցների օգտագործումը։ Մի հեղինակ կարող է ոչ մի հետաքրքրություն չցուցաբերել պատկերավորման որոշ միջոցների նկատմամբ, իսկ մեկ ուրիշը՝ ընդհակառակը։ Ըստ այդ նախա-

---

14 Д. С. Лихачев, նշվ. աշխ., էջ 186։

15 Վ. Ի. Լենին, Նկ, հ. 1, 1974, էջ 159։

սիրության առկայության կամ բացակայության էլ՝ մեկը կարող է այդ ուղղությամբ կրել նպաստավոր ազդեցություններ, իսկ մյուսը՝ ոչ։ Բակունցի արվեստը, օրինակ, անհնար է պատկերացնել առանց պատկերավորման որոշ միջոցների։ Նրա ստեղծագործական դիմանկարին մեծապես հատուկ է մետաֆորների առատ օգտագործումը։ Բակունցը հատկապես համեմատությունների մեծագույն վարպետն է հայ արձակի բնագավառում։ Բոլորովին այլ է Թումանյանի գեղարվեստական արձակը, որը մետաֆորների առումով բակունցյան պատմվածքների ճիշտ հակապատկերն է։ Գեղարվեստական արձակում Թումանյանը ավելի, քան որևէ մեկը, բացարձակ անտարբերություն է ցուցաբերել մետաֆորների նկատմամբ։ Այդ հանգամանքը, սակայն, ոչընչով չի ստվերում նրա արձակ խոսքի գեղարվեստական արժեքը և ոչնչով չի խանգարում դրա հեղինակին լինելու հայ լավագույն վարպետներից մեկը նաև պատմվածքի ժանրում։ Ուրեմն, պատկերավորման միջոցների օգտագործումը ոչ թե գրական պարտադիր, կրկնելի ընթացք է կամ ավանդույթ, այլ սոսկ մի առանձնաբնորոշում, որը կարող է հատուկ լինել ոմանց միայն, բայց ոչ բոլորին։

5. Ավանդույթների բնութագրման համար այնուհետև կարևոր է դրանց՝ յուրաքանչյուր գրողի ստեղծագործության մեջ փոխակերպումների նոր աստիճանի ընկալումը, որովհետև այդ ընկալումն է բացահայտում ավանդույթների զարգացման նորարարական էությունը։ Նորարարությունը երբեք էլ նախընթաց մշակութային զարգացման օրինաչափություններից կամ ավանդույթներից կտրված գեղարվեստական իրողությունների պատահական հայտնություն չէ, այլ այդ ավանդույթների փոխակերպումների ամեն մի հերթական դրսևորումը՝ պատմական նոր պայմաններում։ Ավանդույթներն ու նորարարությունը փոխադարձորեն պայմանավորված և օրգանապես միահյուսված են այնպես, որ առանց մեկի անհնարին է մյուսի ընկալումը։ Չկան ավանդույթներ՝ առանց նորարարության և նորարարություն՝ առանց ավանդույթների։ Գրական ավանդույթների ամեն մի դրսևորում արդեն պարտադիր կրում է իր մեջ նորարարության փաստը, և յուրաքանչյուր նորարարություն խտացնում է իր մեջ նախորդ ավանդութային փոխակերպումների վերջնարդյունքը։ Նորարարությունը ավանդույթների և առհասարակ գրականության զարգացման շարժիչ ուժն է, նրա գոյության ու առաջընթացի կարևոր պայմանը, մշակութային օրինաչափությունների հերթական, կենսականորեն համալրված աստիճանը։ Խոսել որևէ հեղինակի նորարարության մասին, նշանակում է՝ բացահայտել ավանդույթների դրսևորման այն թարմացումները, որոնք իրենց կոնկրետ պատմական արտահայտություններն են ստացել այդ հեղինակի ստեղծագործության մեջ։ Այնպես որ, չկան ավանդույթների շարժման տրամաբանությունից դուրս իրագործվող գրական նորարարություններ։ Դրանք բոլորն էլ կենսագործվում են գրական զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում, նյութական հարաբերությունների փոփոխություններով պայմանավորված հասարակական պահանջմունքների թելադրանքով։

6. Ավանդույթների առավել ամբողջական բնութագրման համար անհրաժեշտ է վերջապես հիշատակել նաև դրանց այնպիսի հատկությունը, որը կոչվելի է դարձնում գրական զարգացման հեռանկարները։ Ավանդույթները, որպես գրական զարգացման օրինաչափություններ, ընդգրկում են ոչ միայն գրական շարժման նախկին ու ներկա միտումները, այլև մատնանշում այդ շարժման հեռանկարները՝ ամենաէական ու ամենարնդհանուր գծերով։ Հեռանկարների ուրվագծման նման հնարավորությունը հսկայական չափով ընդլայնում է ավանդույթների հետազոտման գիտագործնական նշանակությունը։ Ավանդույթների իմացությունը կարևոր է ոչ միայն գրականության պատմության հարցերի ճիշտ լուսաբանման, այլև գրական քննադատության խնդիրների անսխալ լուծման համար։ Ավանդույթները գրաքննադատության հիմնական զենքն են՝ գրական նախընթաց օրինաչափությունների դիրքերից

նրա ներկա ընթացքի և գալիք դրսևորումների ճիշտ կազմակերպման համար։

Ավելին՝ ավանդույթները գրականագետի ու քննադատի համար ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական զարգացման ուղեցույց են։ Քանի որ գրական ավանդույթները կենսական երևույթների զարգացման օրինաչափությունների գեղարվեստական մարմնավորումներն են, ավանդույթների իմացությունը, հետևաբար, զինում է քննադատին ոչ միայն գրական, այլև պատմական պրոցեսի զարգացման օրինաչափությունների իմացությամբ, դրանց հետագա ուղղվածության ու հեռանկարների հստակ զգացողությամբ։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЛИТЕРАТУРНЫХ ТРАДИЦИЙ

А. К. МКРТЧЯН

Резюме

Исследование проблемы литературных традиций вскрывает художественную ценность творчества писателя и способствует определению его места в развитии литературного процесса. К теории литературных традиций можно отнести некоторые существенные признаки, совокупность которых определяется следующим образом: литературные традиции есть объективная закономерность, которая в разные историко-литературные периоды носит обязательный и повторяющийся характер. В творчестве писателя они выступают в постоянной и периодической трансформации, делая возможным предугадать перспективу этих трансформаций.